

Վենետիկի ահա այս անցած կեանքն են նկարագրում զգալի կերպով ճանապարհորդին իւրաքանչիւր քայլափոխում պատահող յիշատակարանները Վենետիկում:

(Երաւունքներ):

ՃԷԺ. Ե. ԴԱՄԱՆ. Խ. Զ.

Ե Ր Ե Ք Հ Ո Պ Ի :

(Երկու ճամբարներ):

Վեց տարին արդէն լրացաւ ինչ որ ես ուսումնասիրումն էի բարձր փիլիսոփայութիւնն Հելլէնիզմի համակարգում: Ո՞վ չգիտէ, թէ ի՞նչ է նշանակում համալսարանական կեանքը: Բաց ազատ կեանք, կեանք արխատօկրատներին: 12 ժամին հազիւ վեր ես կենում, ծխումես ծխաքարչդ, խմումես երկու կամ երեք բաժակ շնապս, և բաճկոնիդ կոճակները կապելով մինչև կոկորդդ, գլխարկդ մի կողմ դարձրած, հանդարտ գնումես երեւելի պրոֆէսսոր հազէնկօպֆի դասախօսութիւնը լսելու: որը մանրամասնաբար գննում էր մտաւոր տեսութեան և փորձերի վերայ հիմնված գաղափարներ: Իւրաքանչիւրն ազատ էր լսելու, յօրանջելու և մինչև անգամ քննելու, եթէ կամենար:

Գասը վերջացաւ. ամենքը խմրովին գնումն էր դէպի Թատար շէքերէն: Կոչված գարեջրանոցը: Ամենքը սեղանի նստեցան, գեղեցիկ աղախինները սեղօնատով պատումէին սեղանի շուրջ ձեռներին բռնած երիշու կով լի ամաններ, ապուխտ և կտրուկ գարեջուր: Եւ երգումէին Շիլլէրի «Ան-շէնկերէն» երգը, խմումն ուտումն և երգումն: Մէկը սուլումէ, միւսը կանչումէ իւր շնիկը, երրորդը միճումէ, միւսը կուռումէ: Գործը այնտեղ է հասնում, որ բաժակները թափվումն, սեղանները դողումն: Գալիս է ուտիկանութիւնը, ու՞մ հասնումէ բանան է գնում, և շատ անգամ ստիպված են եղել բանտում գիշերել:

Բայց օրերը, ամիսները և տարիները թոչումն և թոչում: Հելլէնիզմի համակարգում պատահումն կոմսեր, բարոններ և իշխաններ, լինումն և կոչկանքներ կառակներ: Արխատօկրատները առանձին դաս են կազմում, իսկ մնացած ամենքը մի ամբողջ ընտանիք են կազմում:

Իմ 32 տարիս արդէն լրացել էր և մօրուքիս մէջ երեւումէին սպիտակ մազեր, ծխաքարչը գարեջուրը և թթու կաղամբը կորցրին արդէն իւրեանց հիացուցիչ արժէքը, ցանկալի էր փոփոխութիւնն: Հազէնկօպֆի դասերի մասին այսքան միայն կարող եմ ասել, որ նորա իմաստութիւնները և վերլուծութիւնները, նորա մտածողական, նկատողական ըմբռնմունքի, սպայոյցական և հրահանգական ճշմարտութիւնների քննութիւնները յազեցրին ինձ մինչև սրտիս խոռները: գլխումս ամենայն բան խոռնվեցաւ: Ինձ թուում էր որ ես գիտութեան գաղանիքը ծանաչեցի այն է ex nihilo nihilo (ոչնչից կլինի ոչինչ): Յաճախ ձեռներս շփելով և տարակուսած կրկնումէի. Ո՞չ Գասար Զան, անօգուտ է շատ գիտութիւնը, բնութիւնը զրկվում է իւր գեղեցկութիւններից, եւ այն ժամանակ ողբալու է գառնում:

ունայնութիւնների ունայնութիւն և ամենայն ունայնութիւն: Տխուր էր իմ հոգու զրուծիւնը, երբ 1805 թուին գործով հասկացայ, թէ որքան հեռու էի ես ամենագիտութենից, հասկացայ նշնաբէս, որ փխխտփայական ասպարէզը միշտ վարդերով զարդարված չէ լինում:

Ես մէկ ընկեր ունէի, Աօլֆգանգ Զարֆ անունով. բոլոր իմ կեանքիս մէջ, չտեսայ ես մէկը նորա նման խիստ բնազանց փխխտփայ: Նա կարճ էր հասակով և նիհար, նորա շէկ մազերը միշտ խուզված էին, երեսը խոր ընկած աչքերով և կոշտ ու խառնակ մօրուքով, լայն ուսերի վերայ ձգված էին անտանելի ցնցոտիներ: Երբ տեսնումէիր նորան անլսելի քայլերով անցնելիս ցանկապատի մէջով, ակամայ նմանեցնումէիր նորան ծեր կատուին, որ զիտումէ էգ կատուին: Բայց Աօլֆգանգը ոչինչ հրապուրիչ բաների ետեւից չէր ընկած. նորա բոլոր ուշքը բնազանց փխխտփայութեան հետ էր:

Արդէն անցել էր 5 կամ 6 տարի ինչ որ նա ապրումէր Հին Ապանդանոցի տանիքում, և ոչինչ կերակուր չունէր բացի հացից և ջրից: Ոչ մի բաժակ զարկուր, ոչ մի բաժակ Բէյնի զինի չէին նուաղեցնում նորա դէպի զիտութիւն ունեցած բորբոքը և ոչ մի կտոր ապուխտը չէր ծանրաբեռնում նորա մտաւորական ոյժերը: Եւ ինչ զարհուրելի տեսք ունէր այս մարդը: Զարհուրելի եմ ասում նորա համար, որ չնայելով նորա թորախտական դէմքին, նորա մկանուկքը զեռ ևս շատ ուժեղ էին, նորա երկամեայ յօդուածները երեւումէին ձեռների վերայ, և չէ կարելի ասել, որ նորա տատանող հայեացքը շատ համակրութիւն ազդում լինէր առ նա:

Իւր միայնութենից այս օտարոտի մարդը մի առանձին համակրութիւն էր ցոյց տալիս ինձ: Նա երբեմն գալիս էր ինձ մօտ, նստումէր բազկաթոռիս վերայ, պատմումէր ինձ բնազանցութեան վերաբերեալ իւր արած զիւտերը—իւր մեծ աշխատութիւնների և զիշերային արթնութիւնների պտուղը: Սօկրատի հարց ու փորձ անկու եղանակին հետեւելով, նա ինձ հարցեր էր անում անգաղար, և նորա ձայնը դողումէր ներքին խռովութենից:

—Գաստար, ասա ինձ, ի՞նչ է հոգին, ասումէր նա:

Խոստովանումէմ, որ ես հպարտանումէի իմ զիտուն ընկերիս առաջ, իմ զիտութիւնս ցոյց տալ կարողանալովս և պրօֆէսորի դէմքով ծանր պատասխանումէի:

—Թաղէսն ասումէ, որ հոգին մագնիս է: Պղատոնը անուանումէ հոգին ինքնագոյ, ազատ ներգործող էակ: Ասկլէպիատը անուանումէ նորան զգացման զրդուում: Անաքսամանդրը ուսուցանումէ որ սա հոգի և ջրի խառնուրդ է: Էմպէդոկլը համոզումէ, որ սա արիւն է: Հիպոկրատի խօսքով,—սա բոլոր մարմնի մէջ տարածված ոգի է: Զէնօնի խօսքով—սա ելժեր է, չորս տարրերի էութիւնը: Քսէնօկրատը . . .

—Բաւ է, բաւ է, այդ բոլորը ես առանց քիչ ևս զիւտեմ: Նա խնդրումէ որ ասես, թէ զու ինքդ ի՞նչ ես մտածում հոգու էութեան մասին:

—Դո ինչ եմ մտածում: Լէկտանցիոսի պէս ես մտածումէմ, որ ես

այս մասին ոչինչ չեմ հասկանում: Բնութեամբ ես եպիկուրեան եմ, և ինչպէս քեզ յայտնի է, եպիկուրեանների վարդապետութեամբ, ամենայն դատողութիւն պիտի ենթարկվի զգացմունքին: Հետևաբար ես նորա մասին դատողութիւն ևս չեմ կարող տալ:

— Սակայն, Գասպար, լաւ մտածիր, ոչ ապաքէն մենք տեսնումենք, որ շատ կենդանիներ, ձկներ, զեռուններ կեանք ունին, թէև զուրկ են քանի մի զգացմունքից:

Նոյն իսկ մենք մի թէ ունինք ամեն զգացմունք: Ո՞ր գիտէ, գուցէ կան ուրիշ զգացմունք ևս, որոնց մասին մենք հասկացողութիւն ևս չունինք:

— Գուցէ այդ այդպէս է, սակայն ստուգութիւն չկայ: Հապա ի՞նչ կասես: Գասպար, սորա մասին, կարելի՞ է արգեօք իմանալ այն, ինչ որ կրէք չես սովորած:

— Այդ անկարելի է. գիտութիւնը ուսման և փորձառութեան հետեանք է:

— Հապա հաւի ձագերն ձուից դուրս գալուն պէս սկսումեն վազել և կերակուր որոնել: Ո՞վ է նոցա սովորեցրել ճանաչել, որ բարձրաթոխ բաղէն նոցա թշնամի է և թէ նոքա պիտի ծածկվին իւրեանց մօր թևերի տակ: Մի՞թէ նոցա որ մին սովորեցրած է թշնամուն բարեկամից որոշել, մինչ նոքա ձուի մէջ էին:

— Բնազդումն, բոլորովին բնազդումն. յայտնի է որ ամենայն կենդանիներ ենթարկվումեն բնազդման:

— Մի՞թէ. քո խօսքերից կարելի է եզրակացնել, որ բնազդումն հասկացնումէ կենդանուն այն, ինչ որ սովորած չէ և ոչ փորձած:

— Ինձանից ձեռք չես քաշի՞, Աօլֆգանգ, Ես ի՞նչ կարող եմ դորան պատասխանել: Գու չափազանց շատ ես պահանջում ինձանից:

Արհամարհանքով ժպտելով և ծածկվելով իւր վերարկուի ցնցոտիներով նա լուռ դուրս գնաց: Ես նորան խելագար էի համարում, բայց բոլորովին անփնաս և ո՞վ կարող էր կարծել, թէ բնական փիլիսոփայութեան շատ սէրը կարող է վտանգաւոր լինել:

Այդ ժամանակները յանկարծ անհետացաւ կարկանդակ ծախող վաճառական կինը: Ամեն տեղ խօսումէին այս մասին, թէ Ատտարինէ Աօգէլը կորաւ: Այժմ մտաբերումեմ ես այն բարի կնոջը, թէ ինչպէս կարկանդակների կողովը վարդապոյն ժապաւէնով ուսը ձգած, ամեն առաւօտ 11 ժամին գալիս էր Բեռլին Լեռնային գարեջրանոցը: Մենք ամենքս սիրումէինք նորա հետ խօսակցել, որ և շատ անգամ յիշելով իւր երիտասարդութեան պատահմունքները, ծիծաղումէր մեզ հետ մինչև աչքերը արտասուքով լցվելը:

— Անաս չունի, ասումէր նա, — 50 տարիս արդէն լրացել է: Ես ևս երիտասարդ եմ՝ եղել, և գիտէի ապրել աշխարհումս: Անցածն անցաւ: Ո՛հ, եթէ կարելի լինէր վերստին ապրել, ես ցոյց կտայի ձեզ թէ ի՞նչպէս կեանք անցուցանելու է աշխարհիս վերայ:

Նա ծանր յառաջումէր, իսկ երիտասարդները ծիծաղից մեռնումէին:

Եւ յանկարծ նա կորաւ անհետ և միայն երրորդ օրը ուշք դարձրին, որ նա կորած է: Ամեն տեղ նորա վերայ էին խօսում:

— Ո՞ր է Պատարինէն: Երեւի հիւանդ է: որ չէ երևում: Խեղճ: Ինչ ուրախ կին էր:

Ասումէին, որ ոստիկանութիւնը պտուռներ նորան, բայց ոչինչ հետքեր չերեւցան: Ես հաւատացած էի, որ խեղճ Պատարինէն գուցէ աւելորդ բաժակ զինի խմելով, գետի մօտից անցնելիս գետը ընկած և խեղդված լինի:

Հազէնկօպֆի դասից դուրս գալով, Պատարինէն Վօլֆօյի կորուստը իմացվելու երկրորդ օրը, ես պատահեցի Վօլֆօյանցին, որ տուն էր մտնում: Նա շտապեց ինձ կանգնեցնել և կրակոտ աչքերով ասաց:

Գասպար, ես քեզ էի պտուռում... Թաղթութեան ժամը խփեց: Դէպի յառաջ, Եկ ինձ հետ:

Անտովոր մի բան կար նորա հոգու մէջ, ես այդ նկատեցի նորա գունամաշի և այլայլված երեսից և աչքերի օտարոտի արտայայտութենից: Նա բռնեց ձեռիցս և քարշուռք դէպի կաշէգործների կարգը, իսկ ես կարողութիւն չունէի հակառակելու նորան, մի ծանր անորոշ սարսափից բռնված:

Արագ քայլերով գնումէինք մենք Հէյդըլբերգի հին տների մէջով. ամեն կողմ երեւումէին սուր տանիքներ, փայտեայ ձեմելիքներ, փած ցանկապատներ: Բազմաթիւ գունամաշի դէմքեր երեւումէին պատուհանների մէջ, բազմաթիւ մարդիկ պատառոտված շորերով կանգնած նայումէին մեզ հետաքրքրութեամբ: Արիւնոտ մորթերով կախված ցցերը անցնումէին տանիքի տանիք, բազմաթիւ խողովակներից դուրս էին գալիս ծխի ամպեր: Ինձ թուումէր թէ միջնադարեան պատկեր էի տեսնում իւր խողովութիւններով, խաւարով և փոփոխութիւններով: Պայծառ կապոյտ երկինքը, արեգակնային ճառագայթները, սահելով հին պատերի վերայ, զօրացնումէին հակադրութիւնը և իմ խողովութիւնը: Իմ միտքս չէր գալիս ամենեւին հարցնել Վօլֆօյանցից, թէ ո՞ր է տանում ինձ. գլուխս այնպէս սաստիկ պտտումէր, որ բոլորովին արիւթութիւնս կորցրի:

Ահա անցանք աղքատների բազմամարդ թաղը և մօտեցանք Հին Սպանդանոցի ամառի հրապարակին, Վօլֆօյանցի սառն և ծանր ձեռը համարեա մեխված էր իմ ձեռիս. այնպէս տարաւ նա ինձ մի կիսաւէր տան մօտ, որ գտնվումէր սպանդանոցի և հին մի խոտադէղի մէջ:

— Դէպի յառաջ, ասումէր նա:

Այսպէս մօտեցանք մենք կիսաւէր աստիճաններով մի սանդուղին, նորա վերայով բարձրանալը դժուար էր, բայց Վօլֆօյանցը անհամբերութեամբ շտապեցնումէր ինձ, անդադար կրկնելով.

— Դէպի վեր, վեր:

Իմ վերաս սարսափ տիրեց, այնպէս որ ես ակամայ կանգ էի առնում կամ շունչ առնելու համար, կամ այն հին ու խաւար շինութեան նայելու և կամ երբեմն անհաճոյ ընկերիս ձեռից փախչելու հնար գտնելու համար:

Վեր որ բարձրացանք, սանդուխը բոլորովին անհետացաւ մեր աչքից խաւարի մէջ։ Այժմ՝ ևս չեմ կարող մտաբերել, թէ ես ինչպէս քարշ գալով բարձրանումէի սանդուխով, գոնէ չհարցնելով Վօլֆգանգից դորա բացատրութիւնը։ Իզուր չէ որ խելագարութիւնը վարակիչ հիւանդութիւն են համարում։

Ես միշտ առաջ էի գնում, Վօլֆգանգն ինձ հետեւում։ այսպէս բարձրացանք մենք մինչև վեր, ուր սկսեցինք գնալ փոշոտ յատակի վերայով։ Տեսնումեմ՝ որ մենք գտնվումենք երեք լուսամտաւոր ընդարձակ վերնայարկում, մոխրագոյն պատերով, մէջտեղը դրված էր սեղան զբքերով և լողմերով ծածկված և վերելք գերաններ էին, որ հաղիւ երեւումէին խաւարի մէջ։ Լուսամտաները 10 ռանաչափ բարձր էին յատակից, այնպէս որ փողոցը նայել անկարելի էր։ Այս անգամին ես ուշք չզարձրի պատի աջ կողմում գտնված փոքր դրան և լայն օդաձգին։

Վօլֆգանգը լուր թեմամբ իմ առաջ քաշեց մի հին արկղ, որ ամոսի տեղ էր դորձածվում, ես նստեցի, իսկ նա վերցրեց յատակի վերայից ջրի փարչը և հանգարտ խմումէր։ Ես աչքերս նորանից չէի հեռացնում։

— Ահա մենք հին սպանդանոցի գազաթն ենք հասած, ասաց նա մի անորոշ ժպիտով, փարչը գետինը գնելով։ — վաղուց արդէն քաղաքային վարչութիւնը վճռել է սպանդանոցը քաղաքից զուրս տանել, իսկ ես ահա 5 տարի է որ այստեղ ընակումեմ, առանց վարձի և ոչ ոք արգելք չէ լինում իմ պարապմունքին, իւր այստեղ գալով։

Անկիւնում կուտած ցախերի վերայ նստելով, նա շարունակեց.

— Դէ՛հ, այլ ևս ժամանակ չկորցնենք, սկսենք գործերս, Հը՛, ասա, Գասպար, դու չե՞ս կասկածում, որ մենք հոգի ունինք։

— Վօլֆգանգ, ասացի ես, նորա վարմունքից զրգոված.

— Բոլորովին անմտութիւն է քո կողմից քարշել ինձ այստեղ նորա համար, որ բնական փիլիսոփայութեան վերայ դատարկարանութիւններ անես։ Ես Հագենկօպֆի դասից յետոյ յոյս ունէի լաւ նախաձաշիկ անելու, իսկ դու ահա արգելք ես լինում ինձ։ Փիլիսոփայութեան պէտք եղած բաժինը արդէն կերայ։ Ինձ թուումէ թէ այս բաւական է—մի՞թէ դու այդ չես հասկանում. մնաս բարով, ես նախաձաշելու եմ գնում։

— Մի՞թէ դու ուտելու և խմելու համար ես ապրում միայն, հարցրեց նա մոռլ զէմբով։ Բայց գիտես արդե՞օք, թէ քանի՞ օրեր և գիշերներ եմ անցուցել առանց կերակրի միայն ի սէր գիտութեան։

— Այդ քո կամքն է եղել, դու ապրումես մակարերութիւններով և խառնաշփոթ ապացոյցներով, բայց ես նախադասումեմ երշիկը և մարտօվի գարնջուրը։ Ուրեմն ի՞նչ կայ զարմանալու։ Ոչ ապաքէն կարողութենից վեր չէ կարելի պահանջել։

Մահական դունատութիւնը ծածկեց Վօլֆգանգի երեսը, նորա շրթունքը դողումէին։ Բայց զսպելով իւր կատաղութիւնը, ասաց.

— Ինքդ չես կամենում պատասխանել, ուրեմն լսիր գոնէ իմ ապացոյց-

ները: Մտածիր միայն, Գասպար, ամենայն մարդի համար անհրաժեշտ է իւր նմանների համակրական յարգանքը, իսկ ես աւելի կամենում եմ, որ դու զարմանաս, ճանաչես և խոնարհիս իմ մեծ զիւտի առաջ: Ոչ ապաքէն սակաւ եմ պահանջում ես քեզանից—տասն տարվան շարունակ նստական կեանքիս և անխռն աշխատութեանս համար, կէս ժամ միայն, որ ուշադրութեամբ լսես ինձ:

—Բան չկայ, հնազանդում եմ քո կամքին: Հտապիր ուրեմն, ես լսում եմ:

Նորա երեսը դողդողում էր: Ես ակամայ մտածմունքի մէջ ընկայ և սաստիկ զղջում էի, թէ ինչի մտայ այնտեղ, սակայն խելագարին փորձանքից հեռացնելու համար, խորին ուշք էի դարձնում: Իմ ուշադրութեամբ հանգստացած, մէկ րոպէ լռելուց յետոյ ասաց.

—Դու քաղցած ես, ահա իմ հաց ու ջուրը, կեր և խմիր, միայն ինձ լսիր:

—Պէտք չէ, Վօլֆգանգ, ես այնպէս ևս կարող եմ ուշադրութեամբ լսել:

Գառն ժպիտ ցայտեց նորա կրեսի վերայ, սակայն նա շարունակեց.

—Բանը այն չէ, Գասպար, թէ մենք հոգի ունինք—այս անհերքելի ճշմարտութիւն է, ապացուցված և ընդունված պատմական ժամանակների սկզբից, Ամենայն էակ ապրում է և շնչում է, հետեաբար ամեն ապրողն ունի հոգի, բոյսերից սկսած մինչև մարդը: Մի՞թէ պէտք է 6 տարի լսել Հադէնկոպֆի դասերը, որ այսպիսի մի պատասխան տաս. «Այո, ամենայն էակ գոնէ մի հոգի ունի»: Բայց որքան կազմուածը կատարելագործվում է, այնքան ևս հոգիներ շատանում են . . . Հնչաւոր առարկաներն ահա սորանով են զանազանվում միմեանցից: Բոյսը ունի մի հոգի, Բուսական հոգու ներգործութիւնը շատ հասարակ է, ահա նորա նպատակը—տերևներն սնուցանել օդով, արմատները—հողով, Անդամին ունի երկու հոգի, մէկը բուսական, միւսը—կենդանական, Առաջնի նպատակն է սնուցանել մարմինը թոքերով և ներքին մասերով, որոնք նոյն իսկ բուսականութիւն են: Անդամական հոգու յատուկ նպատակն է զգացումն, իսկ նորա գործարանը—սիրտը, Բայց մարդը, որի մէջ կենտրոնացած է երկրիս արարչագործութիւնը, ունի երեք հոգի—բուսական, կենդանական, նոյն պիտոյքների համար ինչպէս որ կենդանիների և վերջապէս մարդկային հոգի, որը կենդանացնում է իմաստը և ընդունակութիւնները, սորա գործարանը ուղեղն է: Որքան աւելի կատարելագործված է ուղեղի կազմութիւնը, այնքան աւելի մօտ է անասունը մարդին: Հուներ, ձին, փիղը օրինակ են: Միայն մարդկային ոգին ստացած է երրորդ հոգու բոլոր ոյժերը:

—Ի՞նչպէս ես կարծում դու սորա մասին, բարեկամ, հարցրեց նա վերջապէս:

—Ի՞նչպէս ասեմ: Այդ բոլորը տեսութիւն է (տէօրիա) և քո տեսութեան մէջ նշոյնպէս պակաս են ապացոյցներ, ինչպէս բոլոր ուրիշներում:

Այս խօսքերի վերայ Վօլֆգանգը վեր թռաւ տեղից և մի կատաղի յափշտակմամբ ձեռները վեր բարձրացնելով, բացադանչեց.

— Էլ ի հարկէ ապացոյցների պակասութիւն կայ . . .

Ամբողջ տասն տարի այս ծանր բեռ էր իմ հոգուս վերայ. Ցասն տարի սա եղաւ պատճառ իմ ամեն բանից զրկվելուս. գիշերները ես անցուցանումէի անքուն, ի իստ բարոյական տանջանքներ կրելով. Յառաջագոյն ես իմ վերաս սկսեցի փորձեր անել. Իմ քաղցած մնալս հաստատեց իմ մէջ այս ճշմարտութիւնը, բայց սոցա ապացուցանելու համար ոյժ չունէի. Վերջապէս ես գտայ նորան, նա իմ ձեռումն է. Դու պէտքէ լսես երեք հոգիներն ևս . . . իւրաքանչիւր հոգին ինքնըստինքեան պիտի երևի . . . Ահա դու ինքդ կլսես . . .

Յափշտակութեան այս գրգռման մէջ այնքան կատաղի ոյժ կար, որ ես բոլոր մարմնովս դողացի. Բայց նա յանկարծ փոխվեցաւ և սառոյցի նման սառած մնաց. Նորից նստեց փայտի կոյտի վերայ և հանգարտութեամբ ասաց, պատը ցոյց տալով.

— Այս պատի ետեւ ահա գտնվումէ ապացոյցը . . . Դու այս բոլորէս այն կտեսնես . . . Բայց նախ նայիր իմ մտքերի հետզհետէ շարայարութեան, հների կարծիքը հոգու յատկութիւնների մասին քեզ յայտնի է. Նոքա մարդին յատկացնումէին չորս հոգի. caro—մարմին, հոգի և ջրի խառնուրդը, որը մահով ոչնչանումէ. manes—գերեւմաններում երեացող տեսիլները, manes բառը manere—լինել—բառից է ծագում. umbra—ստուեր, առաւել աննիւթ քան թէ manes, որ անհետանումէ իսկոյն երեւելուց յետոյ, վերջապէս spiritus—ոգի, անմարմին աննիւթ էակ, որ մօտ է աստուածութեան. Իմ կարծիքով, հների որոշումը բոլորովին ուղիղ է. հարկաւոր է միայն բաժանել մարդկային էակը իւր բաղադրական մասերի և ապա կտեսնես պարզ երեք հոգիների գոյութիւնը. Խեղքը մեզ ցոյց է տալիս, որ ամեն մարդ անցել է բուսական և կենդանական կեանք, մինչև իւր լիակատար զարգացման հասնելը. ուրիշ խօսքով ասած Պլութագորը վաղուց զգուժէր ճշմարտութիւնը, բայց ապացոյցի չհասաւ. Ես անշուշտ ցանկանումէի լուծել այս խնդիրը. Սորա համար հարկաւոր էր որ աստիճանաբար ոչնչացնէի իմ մէջ երեք հոգին ևս և ապա փոքր առ փոքր նոցա կենդանացնէի. Այս նպատակիս հասնելու համար ես փորձեցի ճնշել մարմինս իրիստ պահեցողութեամբ:

Անբաղադար, այս փորձերի մէջ ամենից առաջ ոչնչանումէ մարդկային հոգին, այն ինչ կենդանական հոգին դեռ ևս ազատ ներգործումէ . . . Քաղցածութիւնս զրկեց ինձ հոգուս կենդանական գոյութիւնը դիտելու կարողութենից. Քաղցածութեամբ մարմինս ճնշելով ես կորցնումէի մտածելու ոյժը և ընդունակութիւնը. Շատ և միշտ անօգուտ փորձեր փորձեցի իմ վերայ, սակայն վերջապէս համոզվեցայ, որ իմ նպատակիս կարող եմ հասնել միայն ուրիշների վերայ փորձեր անելով. Բայց ով կյօժարի իւր անձն զոհել յօգուտ գիտութեան:

Այստեղ Վօլֆգանգի ձայնը ընդհատվեցաւ, նորա ջութուկը դողումէին, յետոյ նա յանկարծ խօսքը կտրեց.

— Ես մտածել եմ գտնել կարեւոր առարկան, որպէս և իցէ, որովհետեւ վճռել եմ փորձեր անել in anima villi: Սարսափը տիրեց ինձ. ես տեսայ, որ նա ամեն բան պատրաստ է անել:

— Հասկանալի՞ է, հարցրեց նա:

— Բոլորովին . . . քեզ զոհ է հարկաւոր . . .

— Լուծելու և զննելու համար, ասաց նա անտարբերութեամբ:

— Գտած ես . . .

— Այո . . . ոչ ապաքէն ես խոստացայ, որ դու կլսես երեք հոգիներն: Այս րոպէիս սա դժուար կլինի, բայց երէկ դու կարող էիր պարզ որոշել ոռնոցը, յառաջանքը, մոնշիւնը, աղերսանքը և ատամների կրճտումն:

Մահի դողը ընկեց ինձ. ինձ կարծես թուլած էին, իսկ Վօլֆգանգը սառն կերպով վառեց իւր լսպտերը և դէպի ձախ օդաձգին մօտենալով ասաց.

— Մօտեցիր հապա և տես. յետոյ ականջ դիր . . . Մի գաղտնի ոյժն քարշումէր ինձ, ուստի կոացայ դէպի բացված կողմը, շնայելով իմ ներքին դողիս և օրհասական նախազգացման: Լսպտերի աղօտ լոյսով ես կարողացայ տեսնել մուկ և խոր անդունդը, որը ոչ մի տեղից ելք չունէր բացի վերնայարկից: Ես կարծումէի որ սա ոչխարների կաշիներ պահելու մառան էր, կաշեգործներին ծախելուց առաջ նոցա կանաչեցնելու այն խոնաւ տեղում: Առաջին վայրկեանում բացի խաւարից և դատարկութենից ոչինչ չնկատեցի:

— Լաւ նայիր, ասաց Վօլֆգանգը, լսպտերն առաջ բերելով, որ ինձ լոյս տայ: Մի՞թէ չես տեսնում այն անկիւնում մի կապոց: Այս Վատարինէ Վօգէլն է, կարկանդակ ծախող այն պառաւ կինը, որը . . .

Նա դեռ խօսքը չէր վերջացրած, որ խաւար անդունդից մի վայրենի և սիրտ կտրտող հառաչանք արձակվեցաւ, որ նմանումէր պղծ տրորած կատուի ձայնին: Զարհուրելի զգացմունքի ազդեցութեան ներքոյ այն էակը թռչկոտումէր և ճիրաններով բռնումէր պատից, ցանկանալով դուրս գալ անդունդից, Ոչ կենդանի, ոչ մեռած կանգնած էի ես, մսվածի նման: Սառն քրտինքը հոսումէր ճակատիս վերայից. վերջապէս ոյժս ժողովելով, ես զարհուրանքով յետ քաշվեցայ:

— Ո՛հ, Աստուած, ինչ զարհուրելի գործ:

— Ահա դու ինքդ լսեցիր նորան, ասաց Վօլֆգանգը դժոխային ուրախութեամբ: Նա կատուի պէս է մլաւում, այնպէս չէ. Անշուշտ այս կինը կատու է եղած, մինչև մարդկութեան կերպարանք ստանալու, անշուշտ, Տեսնումես, ինչպէս նորա մէջ տիրումէ այժմ անասնական բնութիւն: Ահա ինչ կնշանակէ քաղցը . . . Քաղցը, բայց մանաւանդ ծարաւը հրաշալիքներ է գործում:

Նորա երեսը փայլումէր յաղթանակութեամբ, դժոխային օւրախութիւնը փայլումէր նորա աչքերի և ժպիտի մէջ, բայց նա իմ վերաս չէր նայում:

Անբաղդ զոհի միաւումն կորսնցաւ և անմիտ բնագէտը լապտերը սեղանի վերայ դնելով, շարունակեց իւր բացատրութիւնները:

— Նա արդէն այս չորս օր է որ ծով է պահում: Անտաից շինած օղու մի տակառի յոյսով, ես նորան այստեղ բերի, և ստիպելով վայր դնալ փոսի մէջ տակառը բերելու, փակեցի այնտեղ: Արբեցութիւնը նորա կորուստի պատճառն է: Նա արժանաւոր պատիժ ստացաւ իւր անյագ ծարաւի համար: Հա—հա—հա. . . Մարդկային հոգին առաջին երկու օրը բոլոր իւր ոյժով պահպանվումէր: Եւ թէ ինչպէս էր աղաչում նա ինձ, Ի՛նչպիսի զգալի բառերով երգմանցումէր ինձ զթալ իւր վերայ. . . Նա երգումէր, որ ոչինչ յանցանք չէր գործած իմ դէմ, ոչ մի վատ բան չէ արած, և ես իրաւունք չունիմ իւրեան տանջելու. . . Հուսով նորա աղաչանքը փոխվեցաւ կատաղի հայհոյանքների. . . Նա ինձ անուանումէր հրէշ, եղբունագործ, իմ վերայ թափումէր անէծք և հայհոյանքներ: Փակելուց երեք օր յետոյ, երէկ, անհետացաւ նորա մէջ մարդկային հոգին: Պատուն ցոյց էր տալիս իւր ճիրանները, նա քաղցած էր, այդտեղ սկսաւ նա մլաւել և ոռնալ: Բարեբաղդաբար, այս լուռ և խաւար տեղը մարդիկներից ոչ ոք չէ նայում: Բայց անցած գիշեր նորա հատաչանքը մերձակայ ընտկիչները լսած էին, բայց կատուի տեղ էին դրած: Եւ ինչպէս է աղաղակում, — մազերս ցից էին լինում: Բայց գիտես թէ ի՞նչ է լինում մարդս, երբ նորան թողնումէ կենդանական հոգին: Այն ժամանակ կարգը գալիս է բուսական հոգուն, սա ամենից ուշ է հանգչում: Ահա այս է պատճառը, որ թաղած մեռածների եղունգները և մազերը դեռ ևս բաւական ժամանակ բուսնումեն և մինչև անգամ գանդի մէջ մամուռի նման մի բան է կազմվում, որ գոյանումէ ուղեղի կենդանական հիւթերից: Աերջապէս անյայտանումէ և բուսական հոգին ևս: Ուրեմն, Գասպար, քո աչքի առաջ է մարդի մէջ երեք հոգու գոյութեան ապացոյցը, կատարեալ և անհերքելի ապացոյցը:

Ես կարծես ցնորքի մէջ էի կամ տանջանքի արհաւիրքի ազդեցութեան ներքոյ: Նորա բառերը ինձ սարսափեցնումէին: Պատարինէ Աօգէլի ձայնը քրքրումէր սիրտս, թափանցելով մինչև ոսկրներիս ուղեղը. . . Գլուխը սկսաւ սաստիկ պտտել, և խելքս կորցրի. . . Աերջապէս երբ ուշքի եկայ բարոյական ապշութենից, այլ ևս չկարողացայ այս զարհուրանքները տանել: Ես բռնեցի անմիտ բնագէտի կոկորդից և քարշ տուի դէպի դուռը:

— Հրէշ, ո՞վ քեզ իրաւունք տուաւ սպանել քո մերձաւորներին, ոչնչացնել Աստուծու արարածը նորա համար, որ շար հետաքրքրութիւնը լցնես: Ես ինքս կմտնեմ քեզ դատաստանի ձեռք:

Իմ անակնկալ յարձակումն նորան անպատրաստ գտաւ: Առանց ընդդիմութիւն ցոյց տալու թողեց իւրեան քարշել մինչև դուռը, բայց այնտեղ, մի զաղանական ճարպիկութեամբ դուրս ընկնելով իմ ձեռներից, փոխադարձաբար սեղմեց իմ կոկորդս: Նորա աչքերը արիւնով էին լցվել:

և շրթունքը փրփուրով էին ծածկվել, Երկաթի ձեռով բարձրացնելով օդի մեջ, նա ինձ սեղմեց պատին, իսկ միւս ձեռով բացեց վերնատան նիզը, Նորա դիտաւորութիւնը եւ հասկացայ, և բոլոր ոյժս գործ էի դնում ինձ ազատելու նորա երկաթեայ մագիլներից, Բայց այն խնդրը գերբնական ոյժ ունէր, Փոքր ինչ կուտելուց յետոյ, նա նորից սեղմեց իմ կոկորդը և օդի մեջ բարձրացնելով, ձգեց ինձ մի գատարկ տարածութեան մեջ . . Լեռանեալ սարսափելի բառերը հասան ահանջիս.

— Թող կործանվի անհնազանդ մարմինը, Թող յաղթանակէ անմահ հոգին . . .

Խորտակված, չարշարված և խոցված ընկայ ես ցած, և հասայ թէ չէ այս անդունդի յատակին, ծանր դուռը փակվեցաւ իմ վերաս 15 ոտնաչափ ինձանից բարձր և աղօտ լոյսի վերջին ճառագայթները անհետացան իմ աչքից,

Անդունդի յատակի վերայ ես նմանումէի թակարթի մեջ բռնված մի սկիւռին, Առանց հառաչելու ես ոտի կանգնեցի, լուռ, հանգարտ, անասելի զարհուրանքի ազդեցութեան ներքոյ,

— Գասպար, տեսցի ես ինքս ինձ կոչելով պատին և պահպանելով խորին հանգստութիւն, — քեզ դեռ ևս մի միջոց մնացած է — ուտել պառտւին կամ նորան կերակուր դառնալ . . Ընտրութիւնը քեզանից է կախված . . . Ի՛նչ օգուտ, այս տեղից դուրս գալու հնարների մասին մտածելու զուր ժամանակ կորցնելուց . . Երբ ընկար Աօլֆգանդի մագիլների մեջ, բանը վերջացած է, Իսկ պատերը սալաքարից են և յատակը ամուր կաղնի տախտակներից, Երբ որ անցնումէիր դու, Գասպար, կաշեգործների փողոցով, ոչ ոք քեզ չտեսաւ.

Այ՛ մի մարդ քեզ չէ ճանաչում Լին Սպանդանոցի թաղում . . ոչ ոք չէ մտածում պտուել քեզ այս անդունդի մեջ . . Կորաւ Գասպար Յանը, կորաւ անհետ . . Մնումէ միայն մի հնար կեանքս պահելու համար — Կատարինէ Աօգէլը, Կամ աւելի ճիշդն ասած, դուք միմեանց համար հաւասար միջոցներ էք,

Բոլոր այս մտքերը ծագումէին և անցնումէին իմ գլխիս մեջ, Ես սաստիկ դող զգացի իմ մարմնում, որ ամբողջ երեք տարի, շնայելով բոլոր բժշկական հնարներին, չկարողացայ ազատվել այս դողից,

Օղածդի մօտ երեւցաւ Աօլֆգանդի գունատ երեսը, աղօտ լապտերը լուսաւորումէր նորան, Ահամայ անդիտութեամբ ձեռներս ծալվեցան, Ահամայ շարժվումէին շրթունքս և անորոշ ձայներ էին հանում . . անիմաստ բառեր էին դուրս գալիս բերանիցս . . Աօլֆգանդը երկար դիտումէր ինձ, յետոյ ծիծաղեց և իմ ահանջիս այս բառերը հասան.

— Ահա երկչոտ, ինչպէս նա ինձ աղաչումէ,

Այս խօսքերը ինչպէս մահի վճիռ լսեցի, ես ընկայ երեսիս վերայ և ուշաթափ պիտի լինէի, բայց նոյն րոպէին իմ միտքս եկաւ, որ քաղցած պառաւը իմ վերաս կ'յարձակվի, և իսկոյն վերկացայ, Կատարինէ Աօ-

դէլը և ոչ շարժումներ . . . խաւարի մէջ անյայտացաւ Վօլֆգանգի գլուխը: Պարզ լուռութիւնս ինչպէս նա ման էր գալիս վերնայարկում: Եւ ղան էր շարժում և հազում էր իւր շոր հազով: Լսողութիւնս այնպէս լարված էր, որ ամենափոքր ձայնը ականջիս էր հասնում և ինձ սարսափ էր բերում: Ահա յօրանջումէ պառաւ Վօլֆը, ևս դէպի նորան դարձայ և առաջին անգամ տեսայ ինչպէս նորա աչքերը փայլումէին խաւարի մէջ: Ահա Վօլֆգանգը իջնումէ սանդուղով: Եւ համարումէի աստիճանները մինչև որ քայլերի ձայնը կտրվեցաւ: Յետոյ ուր և ինչի՞ գնաց այս շարագործը: Եւ գիտեմ՝ միայն, որ անցաւ մի օր և գիշեր, բայց նա չվերադարձաւ: Միայն միւս օրը մօտ ութ ժամին նա վերադարձաւ այն վայրկեանին, երբ ևս պառաւի հետ այնպէս էինք հառաչում: որ կարծես պատերը մեր հառաչանքից զղրղումէին:

Բոլոր այս երկար և անվերջ ժամերում ևս աչքերս փակել չկարողացայ. քաղցը քրքրումէր իմ ներսս և միւսնոյն ժամանակ ևս տանջումէի տեսնելով, որ քաղցս ամեն բոլորէ աւելանումէ:

Եւ լուսնի և աչքերս վեր բարձրացրի, երբ ականջիս վերնայարկից նուազ ձայներ հասան: Օգտնիլը լուսաւորվեցաւ: Վօլֆգանգը վառեց լապտերը: Անկասկած նա ինձ գիտելու է գալիս: Այս յոյսով ևս պատրաստվեցայ նորան սրտառուիչ աղերսանքս յայտնելու: Բայց յանկարծ ճրագը հանգաւ: Ոչ որ չէ գալիս, ոչինչ չէ լսվում:

Այս շարունակ տանջանքի ժամանակը ևս բոլորովին հաւատացած էի, որ Վօլֆգանգը նորա համար միայն ինձ ուշք չէ դարձնում: որ նորա կարծիքով, ևս դեռ բաւական նուազած չեմ: Եւ նորա համար իւր նման մի մարդ չէի, ոյլ մի օգտաւետ առարկայ, որը պիտանի կլինի գիտութեան համար: երկու երեք օրից յետոյ, երբ կեանքի և մահի մէջ կլինեմ: Եւ զգումէի, ինչպէս մաղերս սպիտակումէին իրաւ այն վայրկեաններում՝ մաղերս սպիտակեցան: Իմ՝ սարսափս և յուսահատութիւնս ոյլ ևս չէին աւելանում: ևս ամեն ճանաչողութիւն կորցրի: Սարսափելի մի շօշափումն ինձ ստիպեց արթնել: Եւ զարհուրանքով յետ քաշվեցայ: Քաղցից տանջված պառաւը սողալով մօտեցել էր և շորիցս բռնել և այս գոռոխային անգունը լցվել էր մլաւելով և ոռնալով: Թէ ի՞նչ զգացմունք ինձ կաշկանդեց—ոյժ չունիմ՝ նկարագրելու:

Եւ պատրաստվեցայ նորա դէմ մինչև վերջին ճիգս պատերազմելու: Բայց խեղճ պառաւը վերջին անկարողութեան էր հասել, նա հինգ օր և գիշեր այս տանջանքներով էր անցուցել:

Եւ մտաբերեցի Վօլֆգանգի այն խօսքերը, որ թաղած մեռածների մաղերը դեռ ևս բուսնումէն և գանդի մէջ մամուռի նման բան է բուսնում: որովհետեւ, երբ մարդը զրկվումէ կենդանական հոգուց, կարգը գալիս է բուսական հոգուն: Ինձ թուումէր, որ Վօլֆը հասել էր արդէն այն դրութեանը և նորա գանգը ծածկվել է մամուռով: Եւ նորա կողքին էի գտնվում:

Այս պատկերով զբաղած, ես մոռացայ քաղցիս տանջանքը: Մեկնվելով պատի երկայնութեամբ և աչքերս լայն բանալով, ես ուղղակի նայումեի, բայց ոչինչ չէի տեսնում:

Երկար պառկած էի անշարժ, աւելի մեռած քան կենդանի: Բայց յանկարծ այս դժոխային խաւարի մէջ լոյս երևեցաւ: Ես աչքերս բարձրացրի. օղածիդում՝ երևումէր Աօլֆգանգի գունատ երեսը: Ըստ երևոյթին նա չէր զգում ոչ ուրախութիւն և ոչ զղջումն. նա միայն փորձեր էր անում իմ վերաս:

Բայց ինչ սարսափ ազդեց ինձ այն դէմքը: Ոչ ծաղրումէր, ոչ վրէժ-ինդիր էր երևում. նա իմ վերաս լոկ դիտողութիւններ էր անում:

Մեր աչքերը միմեանց հանդիպեցան և երկար այնպէս մնացին. վախի ազդեցութենից ես ոյժ չունէի աչքերս նորա աչքերից հեռացնելու, իսկ նա անտարբեր, հանդիսատէս բարեխղճաբար դիտութեան համար հետաքրքիր խնդիր էր ուսումնասիրում:

Ինչ է սա: Այս հրէշի հետաքրքրութիւնը լցնելու համար, ես պիտի մեռնիմ: Եւ իմ բոլոր ազերսանքներս անօգուտ կլինին: Ես այս հասկացայ և լուումէի:

Երկար դիտելուց յետոյ և ըստ երևոյթին իւր եզրակացութիւններով գոհ եղած, չարագործը դարձաւ միւս զոհին հետազօտելու: Նորա աչքերն եւ դիտումեի անդիտութեամբ և ակամայ: Եւ թէ ինչ տեսայ ես յետոյ, պատմել անկարելի է: Անճոռնացած զլուխ խոր ընկած աչքերով, ճնշված, կծկված մարմին այն աստիճանին նիհարացած, որ բոլոր յօդուածները, կարծես, երևումէին հագուստի տակից, զարհուրելի, աննման տեսարան, մի կմախք, գծծված մազերով երկար խոտի նման, տենդի կրակով պրկված աչքեր, մի զոյգ երկար դուրս ցցված ատամներ, Ո՛հ զարհուրանք, ես տեսայ երկու խիտունքներ կպել էին այս կմախքից, — այս ամենը ցոյց տուաւ լապտերի լոյսը: Աչքերս փակվեցան և ես մտածեցի. « Էինդ օրից յետոյ ես ևս սորա նման կմախք կլինիմ: »

Լապտերի լոյսը արդէն անհետացաւ, երբ ես աչքերս բացի:

— Աօլֆգանգ, յանկարծ գոռացի. միտքդ բեր, որ մեղանից վիր Աստուած կայ: Նա բոլորը տեսնումէ: Նա տեսնումէ մեզ: Աօլֆգանգ, նշովված եղեռնագործ:

Պատասխան չկար: Ամբողջ գիշերը տանջանքով անցաւ:

Ինձ պատեց տենդային ցնորքը և զանազան տեսիլներ և հնարներ էին առաջ գալիս այս տանջանքից ազատվելու, բայց զուր: Յանկարծ ես մեռնելու վճիռ զգացի և դորանից յետոյ ինձ մի հանգստութիւն տիրեց: Ես մտաբերեցի Հազէնկօպֆի ապացոյցները հոգու անմահութեան մասին և առաջին անգամ ահա կեանքիս մէջ զգացի նորա անյաղթելի ոյժը:

— Այսպէս է, բացազանչեցի ես, այստեղի կեանքը փորձութեան ժամանակ է: Մարդիկների սրտում թաղարորումէ շահասիրութիւն, անարդարութիւն և կիրք: Ուժեղը ճնշումէ թոյլին, հարուստը նեղումէ աղքատ-

տին: Բարութիւնը մեռած տառ է այս աշխարհում: Մահից յետոյ ամեն բան երջանկանումէ: Աստուած տեսնումէ: որ ես տմարդ անգթութեան զոհ եղայ: Նա ամենագէտ է և ամենակարող: իմ տարած տանջանքներիս փոխարէն կհատուցանէ ինձ: Նա ամենողորմ է: կներէ իմ դէպի մեղքերը ունեցած ձգտումն: Իւր անսահման բարութեամբ նա ինձ ժամանակ կտայ ապաշխարելու և սրբվելու մեղքերից: այս կեանքից դէպի յաւիտեանական կեանքն անցնելուց առաջ: Աստուած: ողորմիր ինձ:

Իմ ապաշխարանքս մաքուր սրտով և հոգուս խորքիցն էր: Բայց և այնպէս չեմ կարող ծածկել: որ նոյն վայրկեաններում խոր հառաչանքներ էին դուրս գալիս իմ կուրծքից: երբ մտաբերումէի ընկերներիս հետ ուրախ կեանքը: Սուրբ երգը: ախորժ գինի: անկեղծ խօսակցութիւն հնչումէին իմ ականջներում և ստամոքսս հառաչումէր իբրև կենդանի մի էակ բողոքելով իւր լիցուած դրութեան դէմ: Բայց իմ բոլոր տանջանքներից ամենանտանելին ծարաւն էր: Ես խելագարի նման դուրս էի հանում լեզուս և քսումէի խոնաւ պատին:

Բուռն կատաղութիւնը պատեց ինձ: երբ աղօտ լոյսը լուսաւորեց օդածիրը:

—Ո՛վ չարագործ: բացադանչեցի ես: նա հաց ունի: նա ջուր ունի: նա խմումէ:

Եւ դ ըստէին ես պարզ ներկայացնումէի: ինչպէս նա մօտեցնումէր փարէր շրջունքին: Մեղմ հոսանքով գնումէին կենդանատու աղբւրի կաթիլները նորա կոկորդով: Ի՛նչ ուրախութիւն: ի՛նչ զով: Ի՛նչպէս աղատ է բացվում այս խելագարի կոկորդը: և բարձրանում է իջնումէ: Ի՛նչ վայելութիւն է զգում նորա ստամոքսը: Յուսահատութենից և կատաղութենից: ես սկսեցի վազել խելագարի նման և գոչումէի:

—Ջուր: ջուր:

Ի նյիտակցաբար սողումէր պատաւն իմ ետեից: իսկ նորա ցնցոտիները տատանվումէին յատակի վերայ: Ոչ: և ոչ դժոխքում կարող է լինել սորանից աւելի զարհուրելի տանջանք:

Օղածգի մէջ երևեցաւ Վօլֆգանգի դէմքը: Առաւօտեան ժամի ութն կլինէր: Ես յանկարծ կանգնեցի և ասացի:

—Լս/ր: Վօլֆգանգ: տուր ինձ մի ումպ ջուր: յետոյ ես համաձայն եմ: որ ինձ քաղցած մեռցնես: Ես երբէք չեմ նախատի քեզ: Միայն մի ումպ ջուր:

Մանուկի նման: ես դառնապէս լացի: Քանի մի վայրկեանից յետոյ ես շարունակեցի:

—Հասկացիր: Վօլֆգանգ: ոչ ապաքէն դու տմարդաբար ես վարվում:.. Մտածիր: Վօլֆգանգ: չէ որ քո հոգին անմահ է և պատասխան պիտի տայ Աստուծուն: Դիցուք լի է այս պատաւը... Բայց մի՞թէ կարելի է ինձ նորան հաւատար դասել: Ոչ ապաքէն ես ևս դիտուեմ և ուսումնասիրում եմ: Ի հարկէ քո սիստէման լաւ է: Ես բոլորովին կարօղ եմ հասկանալ

և գնահատել քեզ . . և հիանումեմ քո վերայ . . Տուր ինձ ուրեմն մի ումպ ջուր, եւ ինչ արժէ քեզ այս: Բո հայեցողական զիւտը չլսված և շտեմնված գործ է: Երեք հոգիների զոյութիւնը անկասկածելի և անհերքելի ճշմարտութիւն է: Հրապարակում ես պատրաստ եմ այս հաստատելու: Եւ ինչ եռանդուն հետեօղ կլինիմ քեզ համար: Եւ միժէ ինձ մի ումպ ջուր չե՞ս տայ:

Առանց պատասխան տալու նա գնաց:

Իմ յուսահատութիւնս անասհման էր: Ես ինձ խիումէի պատին: մահ էի կանչում տանջանքիս վերջ դնելու համար: Ես այս չարագործին հայհոյումէի և անիծումէի:

Յանկարծ իմ կատաղութիւնս ընդհատվեցաւ. ես նկատեցի, որ Աստարինէն կպաւ յատակին և պառկած մնաց անշարժ: Յանկարծ իմ մէջ նորա արիւնով ծարաւս կոտրելու միտք ծագեց:

Աչքերս կարմիր բոցով վառվումէին. ես կոացայ դէպի պառաւը, բայց թալկացայ և ուշաթափ ընկայ երեսիս վերայ նորա ցնցոտիների մէջ:

Թէ որքան մնացի այս անզգայ զրութեան մէջ, չգիտեմ. մտաբերումեմ միայն այն օտարոտի հանգամանքը, որը ստիպեց ինձ զարթնել և յաւիտեան տպաւորվեցաւ իմ յիշողութեան մէջ: Սա մի շան աղեկեղ հաշին էր, այնպիսի թոյլ, ողբալի հաշին, որ հոգիս քրքրվումէր: Մարդկային հառաչանքը չէր կարող նորանից աւելի շարժող լինել. առանց կարեկցութեան անկարելի էր լսել այն ձայները:

Ես դուխս բարձրացրի լսելու թէ որտեղից է այս ողբը, որ իմ տանջանքիս համեմատ էր: Երեսիցս դառն արտասուքներ էին թափվում: Ես ուշի ուշով ահանջ էի դնում: Եւ որքան էր զարմանքս, երբ վերջապէս հասկացայ, որ այս տանջող ողբը իմ կուրծքիցս է դուրս գալիս: առանց իմ կամքի:

Այդ ժամանակից արդէն ես ոչինչ չեմ յիշում: ես կորցրի բոլոր ճանաչողութիւնս:

Աւերջը ես իմացայ, որ այնուհետեւ երկու օր ևս մնացել եմ անդունդի մէջ, խելացնոր բնագէտի զիտողութեան առարկայ դարձած: Հիացած իւր յաղթանակով, նա այն աստիճան յափշտակվել էր, որ կանչել էր իւր ընկերներին զուարճանալու նոցա հիացմամբ և ուրախութիւններով:

Ես ուշքի եկայ վեց շաբաթից յետոյ իմ հին սննեակում: Բարի ընկերներս չըջապատել էին ինձ և ուրախութեամբ աւետումէին իմ անսպասելի յաջող ելքը բարձրագոյն փիլիսոփայութեան գերբնական դասից յետոյ:

Լիւի Բրէմլըր առաջս հայելի բերաւ. ես արտասուքս պահել չկարողացայ տեսնելով մեռեալ յիշեցնող երեսս: Զեմ կարծում թէ Ղազարոսը դագաղից դուրս գալիս ինձանից աւելի վատ լինէր: Խեղճ Աստարինէ Աօգէլը մեռել էր:

Ինձ յարատե ստամոքսի ցաւ էր սպառնում: Բայց ես դեռ երիտասարդ

էի և ամսահազմ, և որ գլխաւորն է, իմ բժշկիս խնամատարութիւնը անսահման էր: Փորրառ փոքր ղյժերս վերադարձան և ես նորից ամողջ եմ:

Ինչ ասել պէտքէ, որ զաղանարարոյ Վ. օլֆգանգը դատաստանին մատնվեցաւ: Բայց նորան չկախեցին, ինչպէս արժան էր, այլ վեց ամիս դատաստանի տակ պահելով, միտիկ, ամենամտանգաւոր խելագարներից համարեցին, քննութենից յետոյ նորան խելագարանոց տարան: Ավ կամենումէ, կարող է այժմ ևս տեսնել և լսել նորա քննութիւնը մարդի մէջ երեք հոգիների գոյութեան մասին: Սուր և ընդհատվող ձայնով նա մեղադրումէ մարդկային ազգի ապերախտութիւնը իւր դէմ և արդարութիւն է պահանջում, այս ինքն արժանայիշատակ արձան իւր հրաշալի գիւտի համար:

Ճէ՛. Դ. Դաւ. աշ. Մ. Տ. Ա.

ԲՆԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆ.

(ՍԱՄՈՒԷԼ ՍՄԵՅԼՍԻՑ. — Արարատ, № 4)

Երեւելի զօրավարը իւր կողմն է ձգում իւր յատուկ բնաւորութեան տէր մարդիկներին այնպէս, ինչպէս մագնիսը քարշումէ երկաթը: Օրինակ սիր Զօն Մուրը ճանաչեց իւրեան շրջապատող սպանների բազմութեան մէջ Նէպիր երեք եղբայրներին, որոնք նայումէին նորա վերայ նոյնպէս հիացած յափշտակմամբ: Նոքա կախարդված էին նորա քաղցրաբարոյութեամբ, նորա արիւթեամբ և բարձր անշահասիրութեամբ: Նա նոցա համար օրինակ դարձաւ, նոքա վճռեցին նորան նմանել, ջանալով, եթէ կարելի է մինչև անգամ նորա հետ մրցել: «Մուրի ազդեցութիւնը, ասումէ սիր Վիլլիամ, Նէպիրի կենսագիրը, ակնյայտնի ներդորձած է նոցա բնաւորութեան կրթութեան և ամբուրթեան վերայ: Այսպիսի երեք անձների հերոս լինելը քիչ փառք չէ. իսկ նոցա մտաւորական և բարոյական յատկութիւնների կանոխ զարգացումն ամենալաւ նշան է թէ որքան նրբամիտ էր Մուրը և թէ որքան լու էր ճանաչում մարդիկներին:»

Իւրաքանչիւր ետանդուն գործի մէջ մի վարակիչ բան կայ: Քաջ մարդիկը ոգևորումեն թոյլերին և յորդորումեն նոցա հետեւել իւրեանց օրինակին: Օրինակ Նէպիրը պատմումէ, որ Վէրի մօտ եղած պատերազմի մէջ, երբ իսպանական բանակի կենտրոնը քայքայվեցաւ և ի փախուստ դարձաւ, Հէվելօկ անունով մի երիտասարդ սպայ (օֆիցէր) առաջ եկաւ և, գտակը շարժելով, մօտ գտնված Իսպանացիներին կանչեց հետեւելու իւր օրինակին: Մտրակիւով իւր ձին, նա թռաւ այն պատնէշի վերայից, որը պաշտպանումէր Ֆրանսական բանակը և ուժգին յարձակվեցաւ նոցա վերայ: Իսպանացիները սաստիկ քաջալերված էին, մի բոպէի մէջ նոքա ժողովեցան նորա շուրջ և «el chico blanco» (գեղեցիկ մանուկ) աղաղակով մօտան Ֆրանսացիների մէջ և քշեցին նոցա բլրից:

Նէպիրը միւսնոյն (History of the Peninsular war) շարադրութեան մէջ ա-